ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 13. Պայքար հանցագործությունների դեմ

Ազգային անվտանգության մարմինները սույն օրենքով և այլ օրենքներով իրենց առջև դրված խնդիրների լուծման նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են հետաքննություն և նախաքննություն՝ ուղղված իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը:

Ազգային անվտանգության մարմինների վրա օրենքով կարող են դրվել հանցագործությունների դեմ պայքարի այլ խնդիրներ:

Հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող օրենսդրությանը, սույն օրենքին և գերատեսչական նորմատիվ ակտերին համապատասխան:

Ազգային անվտանգության մարմինները՝ օրենքով իրենց իրավասությանը հանձնված գործերով իրականացնում են դեպքի վայրի պահպանություն, որի կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: